Նյութի հեղինակ՝
Լիլիթ Գիշյան

# ԲԱՆԱՎԵՃ



# Ի՞ՆՉ Է ԲԱՆԱՎԵՃԸ

- Բանավեճը վիճելի հարցի շուրջ տարբեր հիմնավորումների, փաստարկների, պնդումների և ապացույցների ձևակերպումն ու արտահայտումն է:
- Կանոններով լեզվակռիվ է
- Դիմացինին համոզելու միջոց է



# Բանավեճի սահմանում

Բանավեճը դա վիճահարույց խնդրի շուրջ, փաստերի վրա հիմնված քննարկում կամ վերլուծություն է, որի հիմքում շահերի բախումն է և նպատակն է հասնել ճշմարտության

Բանավեճը բացարձակ ճշմարտության բացառումն է: Այն իրենից ենթադրում է բազմակարծություն: Այն տարաձայնությունների կոնսենսուսն է

Բանավեճը դա երկու կողմերի միջև ընթացող երկխոսության տեսակ է, որը ընթանում է փաստերի և հակափաստերի ձևակերպումով և դրանց բանավոր արտահայտմամբ

# ԲԱՆԱՎԵՃԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Բանավեճը կարծիքների, տեսակետների և դիրքորոշումների փոխանակում է:

Բանավեճը հաջողվում է միայն այն դեպքում, երբ մասնակիցները միավորվում են մեկ ընդհանուր նպատակի շուրջ և թիմերն իրար նկատմամբ փոխհարգալից են:

Բանավեճը պետք է լինի նյութերի հավաքագրման և դրանց միջոցով փաստարկների ձևակերպման արդյունք

# ԲԱՆԱՎԻՃՈՂԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Լսելու կարողություն
- ✓ Համբերատարություն
- ✓ Էթիկա
- ✓ Զսպվածություն
- ✓ Արագ կողմնորոշվելու կարողություն
- ✓ Հաղորդակցական կարողություններ
- ✓ Ճկունություն

- ✓ Լսելու ունակություն
- ✓ Հարցալից վերաբերմունքի առկայություն
- ✓ Հռետորական հմտություն
- ✓ Արագ կողմնորոշվելու հմտություն
- ✓ Ժամանակի կառավարման հմտություն

- ✓ Բանավիճողը պետք է լինի համբերատար
- ✓ Խարիզմատիկ
- ✓ Տիրապետի հռետորական արվեստին
- ✓ Նոր պայմաններին հարմարվելու ունակություն
- ✓ Լավ ինֆարմացիա

# ԲԱՆԱՎԵՃԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ




Լիլիթ Գիշյան

# ԹԻՄԵՐԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ




ԿՈՂՄ

ԴԵՄ

**ԿՈՂՄ**

Միշտ պաշտպանում է քննարկվող հարցադրման մեջ արտահայտված դիրքորոշումը:

**ԴԵՄ**

Միշտ ներկայացնում է հակադրվող դիրքորոշում

Խոսնակը պետք է հանդես գա.

- պարզ և հասկանալի խոսքով. *դատավորը* պետք է հասկանա, թե ինչ եք ասում:
- Վստահություն ունենա. լավ մատուցելու դեպքում կարող եք դատավորին ստիպել, որ ձեզ հավատա:
- Տպավորիչ լինի. այնպես արեք, որպեսզի դատավորը հիշի ձեր ասածները:

## ՓԱՍՏԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ…




## ՓԱՍՏԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ…

- **ՓԱՍՏ.** տեղեկություն է, որը արտացոլում է օբյեկտիվ իրականությունը և կարող է հավաքագրվել ուսումնասիրությունների և տվյալների հավաքագրման ընթացքում:
- **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.** երբ պնդումը չունի համապատասխան հիմնավորում:
- **ԱՊԱՑՈՒՅՑ.** այն փաստն է, որը ներկայացվում է ի պաշտպան պնդմանը և բավարար հիմք է ծառայում այն ընդունելի դարձնելու համար:



Դիրքորոշման առանցքային արժեք

Այն սկզբունքը, արժեքը կամ գաղափարը, որի հիման վրա կողմը պաշտպանում է իր դիրքորոշումը

# ԲԱՆԱՎԵՃԻ ԸՆԹԱՑՔԸ

5 րոպե

«Կողմ» թիմի կառուցողական ելույթ → Հարց և պատասխան → «Դեմ» թիմի կառուցողական ելույթ

5 րոպե

Ընդհանուր հարցերի համար 15

Հարց և պատասխան → «Կողմ» թիմի եզրափակիչ խոսք → «Դեմ» թիմի եզրափակիչ խոսք

3 րոպե

3 րոպե

Գնահատում, արդյունքների ամփոփում

1. «Համաձայն ենք» թիմին տրվում է առաջինը խոսելու իրավունք, քանի որ «Համաձայն չենք» թիմը չի կարող պաշտպանել կամ մերժել քննարկվող խնդիրը, մինչև չիմանա, թե կոնկրետ ինչ «մեղադրանքներով» և առաջարկներով է հանդես գալիս հակառակորդ թիմը:

2. Նմանապես «Համաձայն ենք» թիմին է տրվում նաև առաջինը եզրափակիչ ելույթ ունենալու իրավունքը:

3. Դեմ հանդես եկող թիմն իր հերթին պետք է կասկածի տակ դնի հակառակորդ թիմի առաջարկած դիրքորոշումը, հիմնավոր փաստարկներով հերքի այդ դիրքորոշումը, որոշակի պնդումներով և ապացույցներով ներկայացնի իր դիրքորոշումը:

Եզրափակիչ խոսք

Կողմ

Ինչպես մենք նշեցինք,...... ուստի

Դեմ

Ինչպես մենք ցույց տվեցինք, ..... հետևապես

# ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

Ըստ հայազգի նշանավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթի՝ ճարտասանությունը՝ դա համոզելու արվեստն է:

Ըստ Ցիցերոնի՝ ամենալավ հռետորը նա է, ով իր խոսքով **սովորեցնում է** մարդկանց, **հաճույք պատճառում** և մեծ **տպավորություն գործում**:

**Սովորեցնելը**՝ հռետորի պարտքն է,
**Հաճույք պատճառելը**՝ լսողին տրվող պատիվ,
**Տպավորություն գործելը**՝ անհրաժեշտություն:



Լիլիթ Գիշյան

Արդյոք հասանելի՞ ձևով էին խոսնակները ներկայացնում իրենց գաղափարները

Խոսնակները ինչքանո՞վ էին տեղյակ իրենց ներկայացրած թեմայից

Թիմի անդամները բարեկի՞րթ էին

Յուրաքանչյուր թիմի խոսնակ իր խոսքը կառուցո՞ւմ էր իրեն նախորդողի խոսքի վրա

Լիլիթ Գիշյան

# Բանավեճի թեմայի չափանիշները

- Նշանակալից և կարևոր
- Ոչ երկիմաստ
- Որոշակի առումով գործնական
- Ունենա լուծման հնարավորություն
- Արդիական
- Հավասարապես վիճարկելի
- Կայունություն

Լիլիթ Գիշյան

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կողմ թիմ** | | **Դպրոց**՝ Նոյեմբերյանի ավագ, Բերդավանի միջնակարգ | | |
| **Թեմա**՝ Սովորողը պետք է ամեն ինչ սովորի դպրոցում և տնային աշխատանքը պետք է վերացվի դպրոցական գործընթացից | | | | |
| **Կառուցողական ելույթ** | | | | |
| 1 | Ողջույնի խոսք | 0-5 | | Թիմի ներկայացում, հասկացությունների հստակ սահմանում, դիրքորոշման հստակ ներկայացում, պնդումների թվարկում |
| 2 | Պնդում - /0-3/<br>Փաստ - /0-3/<br>Փաստարկում- /0-4/ | 0-10 | | Պնդման հստակ ներկայացում.<br>յուրաքանչյուր պնդման համար նվազագույնը մեկ փաստ, պնդումներից ու փաստերից բխող փաստարկում |
| **Հարցեր** | | | | |
| 1 | Լավ սահմանված | 0-5 | | Հակիրճ, ժամանակի մեջ տեղավորվող |
| 2 | Տրամաբանված և ելույթից բխող | 0-5 | | Բխում է հակառակ դիրքորոշման կառուցողական ելույթից, անհրաժեշտության դեպքում հարցից հարց բխեցնել |
| 3 | Նպատակային | 0-5 | | Տրված հարցերի պատասխաններին անդրադառնալ հետագա ելույթների ընթացքում |
| **Պատասխաններ** | | | | |
| 1 | Տրամաբանված | 0-5 | | |
| 2 | Փաստերով հիմնավորված | 0-5 | | Եթե հարցերը փաստեր չեն պահանջում, փաստերի ներկայացումը պարտադիր չէ |
| **Եզրափակիչ խոսք** | | | | |
| 1 | Բախումների բացահայտում, վերհանում, հակիրճ ամփոփում | 0-5 | | Դիրքորոքշման հստակ ու ամբողջական ամփոփում, անդրադարձ բոլոր փուլերին |
| **Բանավեճի հմտություններ** | | | | |
| 1 | Հարգալից պահվածք | 0-5 | | |
| 2 | Ժամանակի արդյունավետ օգտագործում և կառավարում | 0-5 | | |
| 3 | Գրագետ խոսք | 0-5 | | |
| 4 | Թեմայի բազմակողմ ուսումնասիրում | 0-5 | | |
| 5 | Ազդեցիկ խոսք | 0-5 | | |
| 6 | Համոզիչ խոսք | 0-5 | | |
| 7 | Թիմային աշխատանք | 0-5 | | |
| Ընդհանուր գնահատական | | 80 | | Դատավոր՝ Ամսաթիվ՝ |

Լիլիթ Գիշյան

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Դեմ թիմ** | | **Դպրոց՝** Կողբի միջնակարգ | | | |
| **Թեմա՝** Սովորողը պետք է ամեն ինչ սովորի դպրոցում և տնային աշխատանքը պետք է վերացվի դպրոցական գործընթացից | | | | | |
| **Կառուցողական ելույթ** | | | | | |
| 1 | Ողջույնի խոսք | 0-5 | | Թիմի ներկայացում, հասկացությունների հստակ սահմանում, դիրքորոշման հստակ ներկայացում, պնդումների թվարկում | |
| 2 | Հակապնդում - /0-3/<br>Փաստ - /0-3/<br>Փաստարկում- /0-4/ | 0<br>-10 | | Հակադարձում, հակապնդումների ներկայացում: Պնդման հստակ ներկայացում. յուրաքանչյուր պնդման համար նվազագույնը մեկ փաստ, պնդումներից ու փաստերից բխող փաստարկում | |
| **Հարցեր** | | | | | |
| 1 | Լավ սահմանված | 0-5 | | Հակիրճ, ժամանակի մեջ տեղավորվող | |
| 2 | Տրամաբանված և ելույթից բխող | 0-5 | | Բխում է հակառակ դիրքորոշման կառուցողական ելույթից, անհրաժեշտության դեպքում հարցից հարց բխեցնել | |
| 3 | Նպատակային | 0-5 | | Տրված հարցերի պատասխաններին անդրադառնալ հետագա ելույթների ընթացքում | |
| **Պատասխաններ** | | | | | |
| 1 | Տրամաբանված | 0-5 | | | |
| 2 | Փաստերով հիմնավորված | 0-5 | | Եթե հարցերը փաստեր չեն պահանջում, փաստերի ներկայացումը պարտադիր չէ | |
| **Եզրափակիչ խոսք** | | | | | |
| 1 | Բախումների բացահայտում, վերհանում, հակիրճ ամփոփում | 0-5 | | Դիրքորքշման հստակ ու ամբողջական ամփոփում, անդրադարձ բոլոր փուլերին | |
| **Բանավեճի հմտություններ** | | | | | |
| 1 | Հարցալից պահվածք | 0-5 | | | |
| 2 | Ժամանակի արդյունավետ օգտագործում և կառավարում | 0-5 | | Տեղավորվել տրված ժամանակի մեջ, չդատարկաբանել ժամանակը լրացնելու համար | |
| 3 | Գրագետ խոսք | 0-5 | | | |
| 4 | Թեմայի բազմակողմ ուսումնասիրում | 0-5 | | Թեմայի ուսումնասիրություն տարբեր տեսանկյուններից | |
| 5 | Ազդեցիկ խոսք | 0-5 | | | |
| 6 | Համոզիչ խոսք | 0-5 | | | |
| 7 | Թիմային աշխատանք | 0-5 | | | |
| Ընդհանուր գնահատական | | 80 | | Դատավոր՝ | Ամսաթիվ՝ |

Լիլիթ Գիշյան

# Շնորհակալություն

Լիլիթ Գիշյան